ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 19/08/07

ք.Երևան

«30»-ը օգոստոսի 2019թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Մ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և

«Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Պ.Հակոբյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով Գնորդին մատակարարել Գնորդին պատկանող շարժական հեռուստակայանների սնուցման DSEC 6BTS-9-G2 և Flsher Panda N 003-024-083 մակնիշի գեներատորների տեխնիկական սպասարկման և վերանորոգման համար անհրաժեշտ և սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված ապրանքները (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Վաճառողը երաշխավորում է, որ Գնորդին հանձնված Ապրանքն իր որակական, տեխնիկական և կիրառելի բոլոր չափանիշներով բավարար է Գնորդին պատկանող շարժական հեռուստակայանների սնուցման DSEC 6BTS-9-G2 և Flsher Panda N 003-024-083 մակնիշի գեներատորների տեխնիկական սպասարկման և վերանորոգման պատշաճ կատարումը ապահովելու և Գնորդին՝ վերջինիս կողմից սույն Պայմանագրի կնքմամբ հետապնդվող նպատակին հասցնելու համար:

1.3 Վաճառողը երաշխավորում է, որ սույն Պայմանագրով մատակարարվող այն Ապրանքի, որը ենթադրում է այդպիսի հին ապրանքի՝ Վաճառողից ձեռքբերվող նոր Ապրանքով փոխարինում՝ փոխարինման աշխատանքը կկատարի ինքնուրույն, սեփական ուժերով և միջոցներով՝ օգտագործելով ապրանքի պատշաճ փոխարինումն ապահովելու համար անհրաժեշտ գործիքներ և ներգրավելով համապատասխան հմտություն ունեցող մասնագետի:

1.4 Սույն Պայմանագրով Ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2019թ.-ի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

1.5 Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրել սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում իր հայեցողությամբ հրաժարվել Ապրանքից, կամ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, եթե մատակարարման ժամկետը խախտվել է 5 (հինգ) օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

i. պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

ii. չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինելու ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

iii. հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը, եթե Ապրանքի համար արդեն իսկ վճարվել է:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

i. պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

ii. հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար արդեն իսկ վճարվել է՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

i. ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

ii. հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

iii. պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

2.1.5 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագիրը լուծելուց հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար Գնորդի կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերի չափով:

2.1.6 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Ընդ որում, Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

i. մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

ii. Ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 5 (հինգ) օրից ավելի.

iii. Վաճառողը չնայած սույն Պայմանագրով իր կողմից տրված երաշխիքի, չի կարողանում պատշաճ կերպով իրականացնել հնի՝ Վաճառողից ձեռք բերվող նոր Ապրանքով փոխարինելու աշխատանքը:

2.1.7 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում, Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի որակի, քանակի, տեսականու մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ լինելու դեպքում, Վաճառողի ներկայացուցիչներին տրամադրել Գնորդի տարածք մուտք գործելու հնարավորություն:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Գնորդի համաձայնությամբ Ապրանքը մատակարարել վաղաժամկետ:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետում և հասցեով:

2.4.2 Պայմանագրի 2.1.2 կետի ii ենթակետով նախատեսված դեպքում, ապահովել Ապրանքի մատակարարումը՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի, քանակի և տեսակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում և հասցեով, իսկ Գնորդի կողմից այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում՝ տրամադրել նաև Ապրանքի որակը հավաստող << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն կամ հայտնել

Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված՝ Գնորդի կատարած անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.6 կետով նախատեսված դեպքերում Պայմանագրի լուծման դեպքում, Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում, դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Սույն Պայմանագրով նախատեսված դեպքում իրականացնել հնի՝ Վաճառողից ձեռք բերվող նոր Ապրանքով փոխարինելու աշխատանքը, ինչպես նաև իր հաշվին վերացնել իրականացված փոխարինման աշխատանքի բոլոր այն թերությունները և/կամ շեղումները, որոնք իրենց բնույթով պայմանավորված հնարավոր չէր հայտնաբերել Ապրանքի հանձնման-ընդունման ժամանակ:

2.4.12 Ապրանքը մատակարարել ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 հասցեով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված նախահաշվի: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, Պայմանագրով նախատեսված դեպքում հնի՝ Վաճառողից ձեռք բերվող նոր Ապրանքով փոխարինելու աշխատանքի պատշաճ իրականացումն ապահովելու ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Գնորդը վճարումն իրականացնում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի երկկողմանի հաստատվելուց հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարման ամսաթիվ է համարվում Գնորդի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Գնորդի բանկում կատարում է Գնորդը, իսկ Վաճառողի բանկում՝ Վաճառողը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը կիրառելի ստանդարտների, կանոնների պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Ապրանքն ընդունվում է Վաճառողի և Գնորդի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքի մատակարարումից հետո 5 (հինգ) օրվա ընթացքում Վաճառողը Գնորդին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

i. հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

ii. Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե Պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա Ապրանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետի պահպանման համար:

6.2 Ապրանքի մատակարարման համար Պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, Վաճառողից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու դեպքում, Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 20 (քսան) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

6.5 Մատակարարված Ապրանքի դիմաց վճարելու սույն Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում, Գնորդի նկատմամբ կետանցի յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն Պայմանագիրը ստորագրող կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

8.4 Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

8.5 Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.6 Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.7 Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, վերջինս պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս կողմին՝ համապատասխան փոփոխությունից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.8 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.9 Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

8.10 Ապրանքի մատակարարման ժամկետը Վաճառողի խնդրանքով կարող է երկարաձգվել՝ մինչև այդպիսի ժամկետի լրանալը՝ պայմանով, որ մատակարարման ժամկետի երկարաձգման դեպքում Գնորդի մոտ չի վերանա Ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.11 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

8.12 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ: Պայմանագրի հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	**Վաճառող**
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Արփա-Սևան» ԲԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 ՀՎՀՀ՝ 01540062 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2470102796740000	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Վաղարշյան 20 ՀՎՀՀ՝ 00003206 «Էվոկաբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 166004670583
Մ.Գրիգորյան *Գործադիր տնօրեն*	**Պ.Հակոբյան** *Տնօրեն*

Հավելված N 1
2019թ.-ի օգոստոսի 30-ին կնքված
N 19/08/07 պայմանագրի

ԱՊՐԱՆՔԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

Հ/Հ	Ապրանքի անվանում և տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Քանակ	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ
1.	Գեներատոր DCEC 6 BTS-9-G2–ի համար յուղի զտիչ code LF 3349՝ փոխարինումով	հատ	1	13500
2.	Գեներատոր DCEC 6 BTS-9-G2–ի համար վառելիքի զտիչ code FS 1280 և FF 5052՝ փոխարինումով	հատ	2	26300
3.	Գեներատոր DCEC 6 BTS-9-G2–ի համար VALVOLINE 10w40 Synthetic տիպի յուղ՝ փոխարինումով	լիտր	20	125200
4.	Գեներատոր Fisher Panda N 003-024-083 –ի համար յուղի զտիչ code 0001525՝ փոխարինումով	հատ	1	38000
5.	Գեներատոր Fisher Panda N 003-024-083 –ի համար վառելիքի զտիչ code 0000220՝ փոխարինումով	հատ	1	30000
6.	Գեներատոր Fisher Panda N 003-024-083-ի համար VALVOLINE 5w30 Synthetic տիպի յուղ՝ փոխարինումով	լիտր	4	41200
7.	Գեներատոր Fisher Panda N 003-024-083 –ի համար օդի զտիչ code 0004005՝ փոխարինումով	հատ	1	34640
8.	Գեներատոր Fisher Panda N 003-024-083 –ի համար շարժիչի փոկ code 0000288՝ փոխարինումով	հատ	1	51160
	ԸՆԴՀԱՆՈՒՐ			**360 000**

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Մ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Վաճառող

«Արփա-Սևան» ԲԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Վաղարշյան 20
ՀՎՀՀ՝ 00003206
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 166004670583

Պ.Հակոբյան
Տնօրեն